



*Միգրացիայի միջազգային
կազմակերպություն*



Եվրոպական Հանձնաժողով



*Հետազոտական ռեսուրսների կովկասյան
կենտրոններ – ՀԱՅԱՍՏԱՆ
Եվրասիա Հիմնադրամի ծրագիր*

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**Միգրացիայի միջազգային կազմակերպության
«ՀՆԱՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ»
ծրագրով 2007թ. հունվարին արված ընտրանքային հարցման**

Պատվիրատու՝

**Միգրացիայի միջազգային կազմակերպության հայաստանյան
ներկայացուցչություն**

Կատարող՝

**Եվրասիա հիմնադրամի Հետազոտական ռեսուրսների կովկասյան
կենտրոններ ծրագրի հայաստանյան կենտրոն**

**Երևան
Փետրվար, 2007թ.**

Բովանդակություն

1. Հետազոտության ընդհանուր նկարագիրը 2

1.1. Հարցման ծավալները և աշխարհագրությունը 2

1.2. Հետազոտության և ընտրանքի մեթոդաբանությունը 3

1.3. Հետազոտության կազմակերպումը և աշխատանքային խումբը 4

1.4. Դաշտային աշխատանքների արդյունքները 4

2. Հարցման արդյունքների վերլուծությունը 5

2.1. Հետազոտված համակցության ժողովրդագրական կազմը 5

2.2. Հետազոտված համակցության սոցիալական կազմը 8

 Կրթամակարդակ 8

 Մասնագիտություն/գրադմուս 8

 Աշխատանքային փորձ 9

 Զբաղվածություն/գործազրկություն 10

 Մասնագիտական վերապատրաստում/լեզուների հմտություն 12

2.3. Հետազոտված համակցության աշխատանքային միգրացիոն նախընտրությունները 13

 Արտերկրում աշխատանքային մասնագիտությունների նախապատվություններ 13

 Արտագնա աշխատանքի համար նախընտրելի երկրները 15

2.4. Աշխատանքային փորձ արտերկրում 18

 Արտագնա աշխատանքային փորձի ընդհանուր ակնարկ 18

 Արտագնա աշխատանքային փորձի աշխարհագրությունը 19

 Արտագնա աշխատանքային փորձի տևողությունը 20

 Արտագնա աշխատանքային փորձի իրավական հիմքերը 21

3. Ամփոփում 22

1. Հետազոտության ընդհանուր նկարագիրը

1.1. Հարցման ծավալները և աշխարհագրությունը

Հարցման ծավալներն ու աշխարհագրությունը (բաշխումն ըստ ՀՀ մարզերի ու բնակավայրերի) որոշվել են պատվիրատուի՝ Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչների հետ համատեղ, հաշվի առնելով երկու կարևոր սահմանափակումներ: Դրանցից մեկն աշխատանքների իրականացման համար հատկացված խիստ սեղմ ժամկետներն էին, իսկ մյուսը՝ գլխավոր համակցությունների համամասնությունները պահպանելուն զուգահեռ, հարցվածների վիճակագրականորեն բավականաչափ նշանակալից մարզային խմբաքանակներ ապահովելու անհրաժեշտությունը: Մայրաքաղաքում հարցվել են 170 ռեսպոնդենտներ, Շիրակում և Լոռիում՝ 50-ական, իսկ Սյունիքում՝ 30 (ընդամենը՝ 300, տես աղյուսակ 1.1):

Աղյուսակ 1.1. Հարցվողների թվաքանակը և բաշխումն ըստ մարզերի և բնակավայրերի, մարզերի ու բնակավայրերի կոդերը և հարցաթերթերի համարները

Մարզեր	Բնակավայրեր	Հարցվողներ	Մարզի կոդ	Բնակավայրի կոդ	Հարցաթերթի համար
Ընդամենը		300			
Ք.երևան	Ընդամենը	170	1	1	1-170
Լոռի	Ընդամենը	50	2		171-220
որից՝	ք.Վանաձոր	30	2	1	171-200
	ք.Ստեփանավան	10	2	2	201-210
	գ. Գուգարք	10	2	3	211-220
Շիրակ	Ընդամենը	50	3		221-270
որից՝	ք.Գումրի	30	3	1	221-250
	ք.Արթիկ	10	3	2	251-260
	գ. Հառիճ	10	3	3	261-270
Սյունիք	Ընդամենը	30	4		271-300
որից՝	ք.Կապան	10	4	1	271-280
	ք.Գորիս	10	4	2	281-290

1.2. Հետազոտության և ընտրանքի մեթոդաբանությունը

Որպես հետազոտության դիտարկման միավորների (արտագնա աշխատանքների մեկնելու ցանկություն ունեցող ՀՀ չափահաս քաղաքացիների) գլխավոր համակցություն օգտագործվել է Եվրասիա հիմնադրամի Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ ծրագրի հայաստանյան կենտրոնի (ՀՌԿԿ-Հայաստան) կողմից 2006թ. հանրապետության ողջ տարածքով իրականացված տնային տնտեսությունների և չափահաս բնակչության ներկայացուցչական սոցիոլոգիական հետազոտության ընտրույթի արդիականացված հասցեացանկը: Ընտրանքի տվյալ բազայի օգտագործումն արդարացված է թե՛ մեթոդաբանական, և թե՛ գործնական առումներով. նախ, գրուցավարներն այցելում են արդեն իսկ պատահականորեն ընտրված կոնկրետ հասցեներ, ինչը երաշխավորում է հարցվողների հնարավորինս լիարժեք ներառումը, և ապա՝ հնարավոր է դառնում կապի ստեղծումը հիշյալ հետազոտության տվյալների բազայի հետ: Նորովի ստացված և արդեն առկա բազմաբնույթ լրացուցիչ տեղեկությունների հնարավոր համադրումն ավելի արժեքավոր կդարձնի պատկերը պոտենցիալ աշխատանքային միգրանտների ու իրենց տնային տնտեսությունների մասին:

Ներկա հետազոտության ընտրանքն իրականացվել է հետևյալ մեթոդաբանությամբ.

- Նախ, ՀՌԿԿ-Հայաստանի 2006թ. հետազոտության մեջ մեկից ավելի կլաստերներով ներկայացված բնակավայրերի համար (Երևան, Գյումրի, Վանաձոր և Կապան) ճշտվել են 1 կլաստերում դիտարկման ենթակա միավորների թվերը: Երևանի դեպքում այն կազմել է 5, իսկ մյուսների, ինչպես նաև դիտարկման մեկ կլաստեր ունեցող բոլոր բնակավայրերի դեպքում՝ 10: Տվյալ բնակավայրում նախատեսվող հարցումների ընդհանուր թիվը բաժանելով մեկ կլաստերում դիտարկման միավորների թվի վրա հաշվարկվել է դիտարկման հիմնական ընտրանքային կլաստերների թիվը: Երևանի համար այն կազմել է 34 կլաստեր, Գյումրիի և Վանաձորի համար 5-ական կլաստեր, իսկ Կապանի համար՝ 1 կլաստեր:
- Հաջորդ քայլով, նշված բազմակլաստերային բնակավայրերի կլաստերների ընդհանուր թվից, պատահական ընտրակարգով իրականացվել է համապատասխան թվով դիտարկման հիմնական կլաստերների ընտրություն:
- Այնուհետև, ընտրված կլաստերների հասցեների ցանկերից, նույն պատահական ընտրակարգով, առանձնացվել են համապատասխան թվով՝ Երևանում 5-ական, մնացած բնակավայրերի կլաստերներում 10-ական տնային տնտեսություններ (տ/տ): Նման կերպ ձևավորված 300 տ/տ-ն էլ հանդիսացել են մեր հիմնական ընտրանքային համակցությունը:
- Ինչ վերաբերում է տվյալ կլաստերների մնացած տ/տ-ներին, ապա դրանք ընդունվել են որպես, այսպես կոչված, **առաջին պահուստային ընտրանքի տ/տ-ներ**, որոնցով հանձնարարվել է փոխարինել հիմնական ընտրանքի այն տ/տ-ը, որտեղ այս կամ այն պատճառով չի հաջողվել հարցում իրականացնել:
- Նշվածից զատ, նկատի ունենալով տվյալ հետազոտության առանձնահատկությունը (այն է՝ անդամների թվում արտագնա աշխատանքների մեկնելու տրամադրվածություն չունեցող տ/տ-ներն այլևս դիտարկման օբյեկտ չեն), ինչը բազմակլաստերանոց բնակավայրերում ամենայն հավանականությամբ պահանջելու էր սովորականից ավելի մեծ թվով պահուստային ընտրամիավորներ, ձևավորվել են նաև **երկրորդ պահուստային ընտրանքի տ/տ-ների ցուցակներ**: Դրանք կազմվել են նույն պատահական ընտրակարգով՝ հիմնական ընտրանքից դուրս մնացած կլաստերների հասցեներից, և օգտագործվել են միայն հարցումների նախանշված թվի ապահովման համար առաջին պահուստային ընտրանքի տ/տ-ների անբավարարության դեպքում:
- Վերջապես, հիմնական ու պահուստային ցուցակների անբավարարության դեպքերում՝ հատկապես մեկ կլաստերանոց բնակավայրերի համար, հանձնարարվել է այցելված տ/տ-

ներից ստանալ տվյալ բնակավայրի բնակիչ հանդիսացող արտագնա աշխատանքների մեկնելու ցանկություն ունեցող ևս մեկ չափահաս անձի տվյալները (“ձնահյուսքի մեթոդ”) և անհրաժեշտության դեպքում հարցումների պակասող թիվը լրացնել վերջիններիս հետ իրականացվող հարցումներով:

1.3. Հետազոտության կազմակերպումը և աշխատանքային խումբը

Հարցման և ընտրանքի մեթոդաբանության մշակումը և հետազոտության արդյունքների վերլուծումը, հաշվետվության պատրաստումն իրականացրել են տնտեսագիտության դոկտոր Հ. Մանասյանը և տնտեսագիտության թեկնածու Ռ. Եզանյանը: Հարցաթերթերի տվյալներն ամփոփել և համակարգչային մշակման է ենթարկվել Մ. Հայրիյանը: Հարցման դաշտային աշխատանքների իրականացումը հանձնարարվել է 4 խմբավարների՝ երկուսը Երևանի, մեկը՝ Լոռիի ու Գյումրիի մարզերի և ևս մեկը՝ Սյունիքի մարզի համար: Հետազոտական աշխատանքների կազմակերպման, իրականացման և վերահսկման ողջ ընթացքում օգտագործվել են ՀՌԿԿ-Հայաստանի հաղորդակցության, մարդկային և համակարգչային ռեսուրսները:

1.4. Դաշտային աշխատանքների արդյունքները

Հարցման դաշտային աշխատանքներն իրականացվել են 2007թ. հունվարի վերջին երկու շաբաթում: Դրանց արդյունքները ներկայացնող աղյուսակ 1.2-ի տվյալները վկայում են, որ հանձնարարված 300 հարցումներն ապահովելու համար կատարվել են 857 աշխատանքային այցեր (միջին հաշվով մոտ 2.9 այց յուրաքանչյուր հարցման համար): Ընդ որում, ընտրանքային համակցության միավորների խմբաքանակների գումարային թիվը՝ 823 տ/տ (հիմնական՝ 300 տ/տ, պահուստային՝ 523 տ/տ), բավականացրել է միայն 266 հարցումների, կամ դրանց թվի 88.7%-ի իրականացման համար, իսկ մնացած 34 հարցումներն անցկացվել են ձնահյուսքի մեթոդով հավաքված հասցեների ռեսպոնդենտների հետ:

Անարդյունավետ այցերի գերակշիռ մասը (63.9%-ը կամ 356 տ/տ) պայմանավորվել է ընտրանքային համակցությունը կազմող տ/տ-ների չափահաս անդամների թվում արտագնա աշխատանքների մեկնելու տրամադրվածություն ունեցողների բացակայությամբ, ևս 19.2%-ի դեպքում (107 այց) հարցում չի կայացել տ/տ-յան կամ ռեսպոնդենտի անհասանելիության պատճառով: Այցերի 11.5%-ի (64 տ/տ) պարագայում հրաժարվել են հարցմանը մասնակցելուց, մնացած 30 անարդյունավետ այցերը (ընդամենի 5.4%-ը) պայմանավորվել են տ/տ-յան փոխվելով (15 դեպք), հասցեի վերացմամբ (3 դեպք) և այլ գործոններով:

Աղյուսակ 1.2. Հարցման դաշտային աշխատանքների արդյունքները

Մարզեր և բնակավայրեր	Այցեր վկայված տ/տ թիվը	Այցի արդյունքը									
		Կայացած հարցում				Անարդյունավետ այց					
		Ընդամենը	այդ թվում		Ընդամենը	այդ թվում՝ ըստ պատճառների					Այլ
Ընտրված տ/տ	Չնահյուսքային տ/տ		Ռեպ. չլինել	Անհասանելի		Հրաժարում	Տ/տ փոխվել	Հասցեի վերացում			
Ընդամենը	857	300	266	34	557	356	107	64	15	3	12
Ք. Երևան	471	170	170	-	301	181	69	40	9	2	-
Լոռի, որից՝	162	50	28	22	112	88	9	8	1	-	6
բ. Վանաձոր	100	30	20	10	70	57	6	6	1	-	-
բ. Ստեփանավան	30	10	5	5	20	15	3	2	-	-	-
գ. Գուգարք	32	10	3	7	22	16	-	-	-	-	6
Շիրակ, որից՝	136	50	43	7	86	58	17	4	1	1	5
բ. Գյումրի	87	30	27	3	57	33	15	4	1	1	3
բ. Արթիկ	25	10	6	4	15	14	1	-	-	-	-
գ. Հառիճ	24	10	10	-	14	11	1	-	-	-	2
Սյունիք, որից՝	88	30	25	5	58	29	12	12	4	-	1
բ. Կապան	53	10	5	5	43	29	10	1	3	-	-
բ. Գորիս	16	10	10	-	6	-	1	4	1	-	-
գ. Հարթաշեն	19	10	10	-	9	-	1	7	-	-	1

Այսպիսով, բերված տվյալներով կարելի է եզրակացնել, որ իրադարձությունների բարենպաստ

զարգացումների դեպքում ընտրանքային համակցությունը կազմող տ/տ-ների գրեթե 1/3-ը (823-ից 266-ը) կարող են ներառվել արտագնա աշխատանքային գործընթացներում: Ընդ որում, եթե նկատի ունենանք, որ արտագնա աշխատանքների մեկնելու միտվածություն կարող են ունենալ նաև անհասանելի հանդիսացած տ/տ-ների որոշ մասի անդամները ևս, բերված հարաբերական մեծությունը կարող է նաև ավելի մեծ լինել: Արձանագրելով այս փաստն, ինչպես նաև առանձին մարզերում այդ ցուցանիշի նկատելիորեն տարբերակված լինելը (ք. Երևան՝ 36.1%, Լոռիի, Շիրակի և Սյունիքի մարզեր՝ համապատասխանաբար 20%, 33.3% և 30.1%), միաժամանակ հարկ է նշել, որ դրանք՝ ինչպես նաև հարցման մնացած բոլոր արդյունքները, կարող են և պետք է ընկալվեն ընդամենը որպես նախնական մոտավոր գնահատականներ, քանզի տվյալ պիլոտաժային դիտարկման ծավալներն ու ընդգրկման շրջանակները բավարար չեն ներկայացուցչական տվյալների ստացման համար:

2. Հարցման արդյունքների վերլուծությունը

2.1. Հետազոտված համակցության ժողովրդագրական կազմը

Հարցվածների ընդհանուր թվում տղամարդիկ և կանայք միջին հաշվով կազմել են 54% և 46%, համապատասխանաբար (տես աղյուսակ 2.1): Հատկանշական է, որ ներկա հարցմամբ աշխատանքային միգրացիոն տրամադրություններ ունեցողների մեջ կանանց գերակշռությունն առավել ընդգծված է եղել ք. Երևանում (հարցվածների գրեթե 62%-ը): Նման պատկերը կարելի կլիներ մեկնաբանել որպես միգրացիայի երևույթում ակնկալվող զգալի տեղաշարժերի վկայություն: Բանն այն է, որ ըստ այլ աղբյուրների¹ տվյալների փաստացի արտագնա աշխատանքային միգրացիոն հոսքերում կանանց ներառվածության մակարդակն անհամեմատ ավելի փոքր է՝ ընդամենի 10-15%-ը: Սակայն, մի կողմից ընտրանքի սակավ ներկայացուցչականությունը, մյուս կողմից էլ այն փասը, որ մարզերում հարցվածների թվում կանանց բաժինն այդքան էլ մեծ չէ (մեկ երրորդը՝ Սյունիքում, մեկ քառորդը՝ Լոռիում և մեկ հինգերորդը՝ Շիրակում), պարտադրում են ձեռնպահ մնալ նման հապճեպ եզրահանգումից:

Աղյուսակ 2.1. Հետազոտված համակցության սեռատարիքային կառուցվածքն ըստ բնակավայրերի (%)

Սեռը	Ընդամենը հարցված	տարիքային խմբեր*							
		մինչև 20	20-25	25-30	30-35	35-40	40-45	45-50	50 և ավել
Ընդամենը հարցված, որից	100.0	2.3	16.7	14.0	14.0	8.7	13.3	15.0	16.0
տղամարդ	54.0	0.6	7.7	8.7	7.7	3.0	6.0	10.0	10.3
կին	46.0	1.7	9.0	5.3	6.3	5.7	7.3	5.0	5.7
Ք.Երևան, որից	100.0	1.8	19.4	15.9	11.8	10.0	14.1	12.9	14.1
տղամարդ	38.2	0.6	7.6	9.4	3.6	2.4	2.3	5.9	6.4
կին	61.8	1.2	11.8	6.5	8.2	7.6	11.8	7.0	7.7
Լոռի, որից	100.0	6.0	14.0	10.0	24.0	-	12.0	10.0	24.0
տղամարդ	76.0	2.0	8.0	6.0	20.0	-	10.0	10.0	20.0
կին	24.0	4.0	6.0	4.0	4.0	-	2.0	-	4.0
Շիրակ, որից	100.0	-	8.0	14.0	8.0	14.0	16.0	26.0	14.0
տղամարդ	80.0	-	6.0	8.0	8.0	6.0	16.0	24.0	12.0
կին	20.0	-	2.0	6.0	-	8.0	-	2.0	2.0
Սյունիք, որից	100.0	3.3	20.0	10.0	20.0	6.7	6.6	16.7	16.7
տղամարդ	63.3	-	10.0	10.0	10.0	6.7	3.3	10.0	13.3
կին	36.7	3.3	10.0	-	10.0	-	3.3	6.7	3.4


*Այս աղյուսակում և հետագա համանման դեպքերում տարիքային խմբի վերին սահմանագծային տարիքը (օր. 20, 25, 30) ներառված չէ:

Աղյուսակի համապատասխան տողերի տվյալների դիտարկումը և դրանց համեմատումը 2001թ.

¹ «Զեկույց ՀՀ հսկիչ անցագրային կետերի ուղևորաշրջանառության (միգրացիայի) ընտրանքային հետազոտության», ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Tasis, IOM, Երևան, հոկտեմբեր, 2002; Ռ.Եզանյան, Ն. Շահնազարյան «Արտաքին աշխատանքային միգրացիա. գրականության տեսություն» ԵԱՀԿ Հայաստանյան գրասենյակ, Երևան, 2006 (http://www.osce.org/yerevan/item_11_18193.html), «Աշխատանքային միգրացիան Հայաստանից 2002-2005թթ.», ԵԱՀԿ Հայաստանյան գրասենյակ, Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ ՀԿ, Երևան, 2006 (www.osce.org/yerevan):


իրականացված ներկայացուցչական ընտրանքային հետազոտության² տվյալների հետ (տես՝ Գծապատկեր 2.1) բացահայտում է այլ առանձնահատկություններ ևս. այսպես, իրական միգրանտների համեմատ պոտենցիալ միգրանտների թվում առավել նշանակալից է երիտասարդների ներկայացվածությունը:

Գծապատկեր 2.1. Պոտենցիալ և փաստացի արտագնա աշխատանքային միգրանտների տարիքային կառուցվածքները (% ամբողջի մեջ)





Գծապատկեր 2.2-ի տվյալները հավաստում են, որ հարցվածների թվում՝ ընդ որում առանց բացառության բոլոր մարզերում, ընդգծված կերպով գերակշռում են բնիկները: Սյունիքի մարզում արտագնա աշխատանքային տրամադրություն ունեցող հարցվածների շուրջ 97%-ը, Լոռիում՝ 96%, Շիրակում՝ 90% և Երևանում՝ 78.2%-ը ծնվել են հենց նշված վայրերում:

Գծապատկեր 2.2. Հետազոտված համակցության կառուցվածքն ըստ ծննդավայրի (% ամբողջի մեջ)



² «Ձեկույց ՀՀ հսկիչ անցագրային կետերի ուղևորաշրջանառության (միգրացիայի) ընտրանքային հետազոտության», ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Tasis, IOM, Երևան, հոկտեմբեր, 2002, էջ 61:




Ինչպես և կարելի էր սպասել, հարցվածների ազգային կազմն առավել քան միատարր է: Աղյուսակ 2.2-ի տվյալների վկայությամբ՝ 300 ռեսպոնդենտներից ընդամենը 4-ն են ոչ հայերը:

Աղյուսակ 2.2. Հետազոտված համակցության ազգային կազմը

Ազգությունը	Ընդամենը հարցված	այդ թվում ըստ մարզերի			
		Երևան	Լոռի	Շիրակ	Սյունիք
Ընդամենը հարցված, այդ թվում	300	170	50	50	30
Հայ	296	169	48	49	30
Քուրդ	1	-	1	-	-
Հույն	1	-	1	-	-
Ուկրաինացի	1	-	-	1	-
Այլ	1	1	-	-	-

Հնարավոր արտագնա աշխատանքային միգրանտների բացարձակ մեծամասնությունը՝ 60-78%-ը առանձին մարզերում, ամուսնացած են, մնացածների հիմնական մասը կազմում են երբևիցե չամուսնացածները (ընդամենի 18-34%-ը, տես Գծապատկեր 2.3): Նշենք, որ վերը հիշատակված 2001թ. հետազոտության տվյալներով արտագնա աշխատանքների մեկնողների թվում ամուսնացածները կազմում էին գրեթե 83%, երբեք չամուսնացածները՝ 15%-ից քիչ ավելին³:

Գծապատկեր 2.3. Հետազոտված համակցության կառուցվածքն ըստ ընտանեկան դրության (%)



Հարցվածների միջին հաշվով 66%-ն ունեն երեխաներ. Սյունիքում երեխաներ ունեն հարցվածների 70%-ը, Շիրակում՝ նույնիսկ 82%-ը: Երեխաների միջին թիվը երեխա ունեցող մեկ ռեսպոնդենտի

³ Նույնը՝ էջ 62:

հաշվով կազմում է ողջ համակցության համար՝ 2.1, Երևանում՝ 1.9, Լոռիում՝ 2.1, Շիրակում՝ 2.4 և Սյունիքում՝ 2.7 երեխա (աղյուսակ 2.3):

Աղյուսակ 2.3. Հետազոտության ռեսպոնդենտների բաշխումն ըստ ունեցած երեխաների թվի (%)


Երեխաների թիվը	Ընդամենը հարցված	այդ թվում ըստ մարզերի			
		Երևան	Լոռի	Շիրակ	Սյունիք
Ընդամենը հարցված, որից՝	100.0	100.0	100.0	100.0	100.0
Երեխա չունի	34.0	37.6	40.0	18.0	30.0
ունի 1 երեխա	14.0	19.4	8.0	6.0	6.7
ունի 2 երեխա	34.7	31.8	38.0	42.0	33.3
ունի 3 երեխա	13.0	9.4	12.0	26.0	13.3
ունի 4 երեխա	3.3	1.2	2.0	8.0	10.0
ունի 5 և ավելի երեխա	1.0	0.6	-	-	6.7

2.2. Հետազոտված համակցության սոցիալական կազմը

Կրթամակարդակ

Հետազոտված համակցության կրթամակարդակն ընդհանուր առմամբ բավական բարձր է. միջնակարգ և ոչ-լրիվ միջնակարգ կրթություն ունեն հարցվածների միայն 37.5%-ը: Սակայն եթե Երևանում այդպիսի ռեսպոնդենտների բաժինը 27,6% է, ապա մարզերում անհամեմատ բարձր է և կազմում է Շիրակում՝ 46%, Սյունիքում՝ մոտ 52% և Լոռիում՝ 54%: Հատկանշական է, որ Երևանում արտագնա աշխատանքային հնարավորություններ փնտրողների 40%-ն ունեն բարձրագույն կրթություն (տես գծապատկեր 2.4):

Գծապատկեր 2.4. Հետազոտված համակցության կրթական կառուցվածքն ըստ բնակավայրերի (%)



Մասնագիտություն/զբաղմունք

Հարցվածների միայն աննշան մասն է (միջին հաշվով մոտ 5%-ը), որ չունի որևէ մասնագիտություն: Նման ռեսպոնդենտների բացարձակ մեծամասնությունը՝ 14-ից 9-ը, կենտրոնացված է Սյունիքում: Ինչ վերաբերում է մասնագիտություն ունեցողներին, ապա նրանց թվում առավել նշանակալից են ներկայացված «Ինժեներ/տեխնիկ/մեխանիկ/բանվոր» մասնագիտություններ ունեցողները: Սակայն, եթե միջինում տեխնիկական մասնագիտություններ ունեցողների բաժինը մոտ 39% է, ապա Լոռիում և Շիրակում՝ հարցվածների ավելի քան կեսը (55,3% և 57.4%, համապատասխանաբար, աղյուսակ 2.4): Հատկանշական է կրթության և առողջապահության ոլորտների մասնագիտություններ ունեցողների զգալի ներկայացվածությունը. Երևանում այդ ոլորտներն են ներկայացնում արտագնա աշխատանքի մեկնելու տրամադրվածություն ունեցողներից համարյա յուրաքանչյուր երրորդը:

Աղյուսակ 2.4. Հետազոտության ռեսպոնդենտների բաշխումն ըստ մասնագիտության/զբաղմունքի (%)

Մասնագիտություն/զբաղմունք	Ընդամենը	այդ թվում՝ ըստ մարզերի			
		Երևան	Լոռի	Շիրակ	Սյունիք
Ընդամենը հարցված	100.0	100.0	100.0	100.0	100.0

այդ թվում՝					
Պետական/գինվ. ղեկավարություն	1.4	2.5	-	-	-
Կոմերցիոն հատվածի ղեկավար	1.8	2.5	-	2.1	-
Ինժեներ/ տեխնիկ/մեխանիկ /բանվոր	38.7	31.2	55.3	57.4	27.6
Առևտուր/խանութպան	7.4	6.9	8.5	10.6	3.4
Կրթության ոլորտ	11.3	15.0	4.3	4.3	13.8
Առողջապահություն (բժիշկ, քույր ևն)	8.1	13.1	4.3	-	-
Գյուղ/տնտ. ոլորտ	1.8	0.6	2.1	4.3	3.4
Տրանսպորտ	3.5	-	6.4	10.6	6.9
Սպասարկման ոլորտ	8.1	9.4	6.4	6.4	6.9
Խնամող, սոց. աշխ.	0.3	-	2.1	-	-
Տնային աշխատող	1.4	1.9	-	2.1	-
Արվեստի ոլորտ	3.9	5.0	2.1	-	6.9
Այլ, որից	12.3	11.9	8.5	2.1	31.0
մասնագիտություն չունի	4.9	0.6	8.5	-	31.0

Հատուկ անրադարձ է պահանջում «այլ» մասնագիտական համախումբը. մասնագիտություն չունեցողներին բացառելու դեպքում այն ներառում է բոլոր ռեսպոնդենտների 8.4%-ը, իսկ Երևանում՝ նույնիսկ 11.3%-ը, այսինքն անհամեմատ ավելի շատ, քան առանձնացված խմբերից մեծ մասում: Ամեն ինչից զատ, սա թերևս վկայում է, որ անհրաժեշտ է վերանայել մասնագիտությունների տվյալ խմբավորումը: Դա է հուշում նաև «այլ» պատասխանը տված ռեսպոնդենտների մատնանշած մասնագիտությունների ցանկի (աղյուսակ 2.5) դիտարկումը:


Աղյուսակ 2.5. «Այլ մասնագիտություն» պատասխանը նշած ռեսպոնդենտների բաշխումն ըստ մատնանշված մասնագիտության

Մատնանշված մասնագիտություններ	Մատնանշվածների թիվը
Երկրաբան	1
Գիտնական մաթեմատիկոս	1
Գիտնական քիմիկոս	1
Իրավաբան	2
Լեզվաբան	2
Կենսաբան	1
Տնտեսագետ	5
Հաշվապահ	4
Սպորտսմեն	1
Ընդամենը	18

Աշխատանքային փորձ


Մասնագիտություն ունեցող ռեսպոնդենտների մի զգալի մասին՝ միջինում մոտ 23%-ին, Սյունիքում՝ 27.3 և Շիրակում՝ ավելի քան 40%-ին, առայժմ չի հաջողվել գործնականում կիրառել մասնագիտական հմտությունները: Դրա հետ մեկտեղ, յուրաքանչյուր երկրորդ հարցվածն ունի իր մասնագիտությամբ աշխատանքի 5 և ավելի տարվա աշխատանքային փորձ (Գծապատկեր 2.5):

Գծապատկեր 2.5. Մասնագիտություն ունեցող ռեսպոնդենտների բաշխումն ըստ տվյալ մասնագիտական աշխատանքի փորձի (%)



Հարցվածների մոտ 67%-ն ունեն 5 տարուց ավելի ընդհանուր աշխատանքային փորձ, 9%-ը՝ 2-5 տարվա, և երբեք աշխատանք չեն ունեցել ևս 9%-ը: Մարզային կտրվածքով ուշագրավ է 5 և ավելի տարվա ընդհանուր աշխատանքային փորձ ունեցողների առավել ընդգծված ներկայացվածությունը Շիրակում (76%) և նվազ ներկայացվածությունը Սյունիքում (50%), ինչպես նաև երբեք չաշխատածների ամենաբարձր տեսակարար կշիռը Սյունիքում և ամենացածրը՝ Լոռիում (23.4% և 4%, համապատասխանաբար, տես՝ գծապատկեր 2.6): Նման իրավիճակն, ընդհանուր առմամբ, համահունչ է հանրապետության համապատասխան մարզերում զբաղվածության ընդհանուր իրավիճակին:

Գծապատկեր 2.6. Հետազոտված համակցության բաշխումն ըստ ընդհանուր աշխատանքային փորձի (% ամբողջի մեջ)



Զբաղվածություն/գործազրկություն

Զբաղվածության կարգավիճակը ներկայացնող ուշագրավ աղյուսակ 2.6-ի տվյալները վկայում են, հարցման պահին որևէ աշխատանք չեն ունեցել յուրաքանչյուր 10 հարցվածից ավելի քան 6-ը, Շիրակում և Լոռիում անգամ համապատասխանաբար՝ 4-ից 3-ը և գրեթե 8-ից 7-ը: Ի լրում, աշխատանք ունեցողների (բոլորի 38%-ը) ավելի քան 1/3-ի մոտ այն հիմնական չէ: Ամեն ինչից գատ այս տվյալները միանշանակորեն հավաստում են, որ արտագնա աշխատանքի մտայնության

ձևավորման ու ամրագրման կարևորագույն գործոնը աշխատանքի ու աշխատատեղերի բացակայությունն է:

Աղյուսակ 2.6. Հարցվածների բաշխումն ըստ ներկայիս աշխատանքային կարգավիճակի (%)

Աշխատանքային կարգավիճակը	Ընդամենը հարցված	այդ թվում ըստ մարզերի			
		Երևան	Լոռի	Շիրակ	Սյունիք
Ընդամենը հարցված	100.0	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում					
Լրիվ դրույքով աշխատանք	24.3	32.4	4.0	18.0	23.4
Ոչ լրիվ դրույքով աշխատանք	6.0	10.0	-	2.0	-
Պարբերական ծառայություններ	4.0	5.3	4.0	2.0	-
Սեզոնային աշխատանք	3.7	1.8	6.0	2.0	13.3
Առանց վարձատրության (կամավոր) աշխատող	-	-	-	-	-
Չի աշխատում, աշխատանք է փնտրում	52.7	37.6	86.0	66.0	60.0
Չի աշխատում, աշխատանք չի փնտրում	9.3	12.9	-	10.0	3.3


Ոչ պակաս հետաքրքիր է նաև հետազոտությամբ բացահայտված այն փաստը, որ հարցվածների մեջ աշխատանք չունեցողների միայն մոտ 6%-ն ունեն պաշտոնապես գրանցված գործազուրկի կարգավիճակ, իսկ գրեթե 5%-ն էլ զբաղվածության ծառայությունում գրանցված են սոսկ որպես աշխատանք փնտրող: Փաստորեն, ՀՀ Ջբաղվածության ծառայությունում որևէ գրանցում չեն ունեցել աշխատազուրկ ռեսպոնդենտների մոտ 90%-ը (աղյուսակ 2.7): Ցավոք, ներկա հետազոտության ծրագրով հնարավոր չէր հետամուտ լինել նման իրավիճակը պայմանավորող գործոնների բացահայտմանը և պատշաճ մեկնաբանությունների ներկայացմանը:

Աղյուսակ 2.7. Աշխատանք չունեցող ռեսպոնդենտների բաշխումը ըստ ՀՀ Ջբաղվածության ծառայությունում գրանցվածության հանգամանքի (%)

	Ընդամենը հարցված	այդ թվում ըստ մարզերի			
		Երևան	Լոռի	Շիրակ	Սյունիք
Ընդամենը աշխատանք չունեցող հարցված, որից՝	100.0	100.0	100.0	100.0	100.0
Ունի գործազուրկի կարգավիճակ	5.9	5.8	11.3	2.6	-
Գրանցված է որպես աշխատանք փնտրող	4.8	7.0	4.6	2.6	-
Որևէ գրանցում չունի	89.3	87.2	84.1	94.8	100

Հարցման պահին աշխատանք չունեցողների մոտ 31%-ը կորցրել էր այն նախորդ մեկ տարվա ընթացքում, 29,1%-ի «պարապուրդի» տևողությունը կազմում էր 2-5 տարի, իսկ մնացած գրեթե 40%-ն այսպես կոչված քրոնիկ աշխատազուրկներ էին «պարապուրդի» մատնված ավելի քան 5 տարով (տես Գծապատկեր 2.7):

Գծապատկեր 2.7. Աշխատանք չունեցող ռեսպոնդենտների բաշխումն ըստ աշխատանք չունենալու տևողության (%)



Մասնագիտական վերապատրաստում/լեզուների իմացություն

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հարցվածների նկատելի մասը՝ ավելի քան 1/3-ը, որոշակի քայլեր է ձեռնարկել իր մասնագիտական կարողությունների ընդլայնման ուղղությամբ: Մասնավորապես, նրանց ավելի քան 7%-ը հատուկ մասնագիտական հմտություններ են ձեռք բերել 2-3 առարկաների գծով լրացուցիչ դասընթացների միջոցով կամ այլ տեսակի կրթությամբ: Ամենից ավելի հաճախ հարցված են եղել օտար լեզուների ու համակարգչային գիտելիքների դասընթացները: Խիստ ուշագրավ է այն հանգամանքը, որ լրացուցիչ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման ջանքերն ակտիվ են եղել հատկապես Երևանում, մինչդեռ այդ ուղղությամբ որևէ քայլ չձեռնարկած ռեսպոնդենտների բաժինը Լոռիում կազմել է 70%, Սյունիքում՝ մոտ 76% և Շիրակում՝ նույնիսկ 88% (աղյուսակ 2.8):

Աղյուսակ 2.8. Հարցվածների բաշխումն ըստ լրացուցիչ դասընթացների կամ այլ տեսակի կրթությամբ ձեռք բերված հատուկ մասնագիտական հմտությունների (% ամբողջի մեջ)

Հատուկ մասնագիտական հմտությունները	Ընդամենը հարցված	այդ թվում ըստ մարզերի			
		Երևան	Լոռի	Շիրակ	Սյունիք
Ընդամենը հարցված	100.0	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում՝ հատուկ մասնագիտական հմտություններ ունեցողները					
Լեզու, համակարգիչ և այլ	0.7	1.2	-	-	-
Լեզու և համակարգիչ	5.7	9.4	-	-	3.4
Համակարգիչ և հաշվապահություն	1.0	1.8	-	-	-
Լեզու	8.4	12.3	4.0	-	6.9
Համակարգիչ	13.7	14.7	22.0	4.0	10.4
Հաշվապահություն	0.3	-	-	-	1.4
Այլ	5.0	5.3	4.0	8.0	-
Ձեռք չի բերել	65.2	55.3	70.0	88.0	75.9

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում *օտար լեզուների* իմացության վերաբերյալ հետազոտությամբ ստացված արդյունքները. աղյուսակ 2.9-ի տվյալներից ակնհայտ է, որ հարցվածների 90%-ը այս կամ այն չափով տիրապետում է ռուսերենին, իսկ յուրաքանչյուր 3-րդը՝ անգլերենին: Ընդ որում, եթե ռուսերենին վարժ տիրապետում են ռեսպոնդենտների կեսից ավելին, ապա անգլերենին՝ միայն մոտ 6%-ը: Նշենք, որ ավելի քան 10%-ի կողմից որևէ չափով ռուսերենին չտիրապետելու անակնկալ փաստը կարող է մեկնաբանվել որպես այդ լեզվամշակույթի հողմահարման սկիզբ: Մինչդեռ անգլերենի որոշակի իմացության աստիճանը վկայում է մեզանում (համեմայն դեպս արտագնա աշխատանքների միտվածություն ունեցողների շրջանում) այս լեզվին տիրապետելու գործնական կարևորության գիտակցումը:

Աղյուսակ 2.9. Հարցվածների բաշխումն ըստ որոշակի օտար լեզուների իմացության (% ամբողջի մեջ)

Լեզուներ	Ընդամենը հարցված	որից տվյալ լեզվին				Որևէ չափով չեն տիրապետում
		Այս կամ այն չափով տիրապետում են				
		Ընդամենը	այդ թվում			
		վարժ	բավարար	տարրական		
Ռուսերեն	100.0	89.7	55.4	27.0	7.3	10.3
Անգլերեն	100.0	32.7	5.7	15.0	12.0	67.3
Ֆրանսերեն	100.0	6.4	1.7	2.0	2.7	93.6
Գերմաներեն	100.0	5.0	0.7	1.7	2.6	95.0
Իտալերեն	100.0	2.0	-	1.7	0.3	98.0
Թուրքերեն	100.0	1.7	0.3	1.4	-	98.3
Լեհերեն	100.0	1.3	0.3	1.0	-	98.7
Հուներեն	100.0	1.0	0.3	-	0.7	99.0
Իսպաներեն	100.0	1.0	0.3	0.3	0.3	99.0
Վրացերեն	100.0	0.7	0.3	-	0.3	99.3
Այլ	100.0	2.7	0.7	0.3	1.7	97.3

Հավելենք, որ յուրաքանչյուր հինգերորդ հարցված որոշակի իմացություն ունի որևէ այլ օտար լեզվից, ընդ որում աղյուսակում տեղ գտած 8 լեզուներից գատ 11 ռեսպոնդենտներ մասնանշել են իրենց կողմից այլ օտար լեզուների իմացության փաստը՝ մեկական անգամ հիշատակվել են ուկրաիներենը, լատիշերենը, բուլղարերենը, ադրբեջաներենը, արաբերենը, պարսկերենը, չինարենը և շվեդերենը, իսկ ոչ հայազգի 4 ռեսպոնդենտներից 3-ի կողմից, որպես օտար լեզու նշված հայերենը, բնականաբար, աղյուսակում տեղ չի գտել:

Բավական մտահոգիչ է ըստ տարածքների օտար լեզուների իմացության աստիճանի զգալի տարբերությունների փաստը. մասնավորապես «որևէ օտար լեզվի, որևէ չափով չտիրապետողների» բաժինը Սյունիքի մարզում հասնում է 20%-ի, այն դեպքում, երբ միջինում այն 4.3% է եղել (աղյուսակ 2.10): Սյուս կողմից, հարցվածների որոշակի մասը այս կամ այն չափով տիրապետում է մեկից ավել օտար լեզուների:

Աղյուսակ 2.10. Հարցվածների բաշխումն ըստ օտար լեզուների իմացության աստիճանի (% ամբողջի մեջ)

Օտար լեզուների իմացության խմբեր	Ընդամենը հարցված	այդ թվում ըստ մարզերի			
		Երևան	Լոռի	Շիրակ	Սյունիք
Ընդամենը հարցված	100.0	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում.					
Ոչ մի լեզու, ոչ մի չափով	4.3	3.5	-	2.0	20.0
Միայն 1 լեզու, տարրական	7.3	4.7	10.0	18.0	-
Միայն 1 լեզու, բավարար	22.4	12.8	34.0	48.0	13.3
1 բավարար, 1 տարրական	2.7	2.4	-	4.0	6.7
1 բավարար, 2 տարրական	0.3	0.6	-	-	-
2 բավարար	1.0	0.6	2.0	2.0	-
Միայն 1 լեզու, վարժ	25.0	27.1	20.0	14.0	40.0
1 վարժ, 1 տարրական	11.0	12.4	16.0	8.0	-
1 վարժ, 1 բավարար	16.0	22.9	10.0	-	13.3
1 վարժ, 1 բավարար, 1 տարր.	5.0	5.9	6.0	2.0	3.3
1 վարժ, 2 բավարար	0.3	-	2.0	-	-
2 վարժ	2.4	3.5	-	2.0	-
2 վարժ. 1 տարրական	1.0	1.8	-	-	-
2 վարժ, 1 բավարար	1.0	1.2	-	-	3.3
2 վարժ, 1 բավարար, 1 տարր.	0.3	0.6	-	-	-

2.3. Հետազոտված համակցության աշխատանքային միզրացիոն նախնատրությունները

Արտերկրում աշխատանքային մասնագիտությունների նախապատվություններ

Հարցվածների նախապատվություններն ըստ արտագնա աշխատանքային մասնագիտությունների ներկայացված են աղյուսակ 2.11.-ում: Աղյուսակի տվյալները քիչ թե շատ հստակ դրսևորում են երկու հանգամանք: Առաջինն այն է, որ հարցվածների առավել նշանակալից մասը, թերևս,

Կոմերցիոն հատվածի ղեկավար	1.3	0.3	0.3	0.3		0.3											
Ինժեներ/տեխնիկ/մեխանիկ/բանվոր	24.7	0.3	0.3	20.3		1.0		0.3	1.0							0.3	1.0
Առևտուր/խանութայան	6.3			1.0	3.3	0.3		0.3		1.0			0.3				
Կրթության ոլորտ	8.3	0.3				5.0				0.3			0.7				2.0
Առողջապահություն	6.3						5.7										0.7
Գյու/տնտ. ոլորտ	1.0				0.3			0.3	0.3								
Տրանսպորտ	3.3			0.7		0.3			1.7								0.7
Սպասարկման ոլորտ	8.7		0.3	2.0	0.3	0.3	0.3	0.3		3.0			0.7	0.3	1.0		
Խնամող, սոց.աշխ.	4.3			1.3	0.3	0.7				0.7	0.3	0.3		0.7			
Տնային աշխատող	1.3			0.3	0.3							0.7					
Արվեստի ոլորտ	2.0												1.3				0.7
այլ	3.7														3.0		0.7
Ցանկացած	27.7	0.3	0.7	11.3	2.3	2.0	1.7	0.3	0.3	2.7		0.3	0.7	2.3	2.3	0.3	

Արտերկրում ունեցած մասնագիտությամբ աշխատելու մտադրություններն ու ցանկացած այլ աշխատանքի անցնելու պատրաստակամությունն առավել պարզորոշ են դրսևորվում ստորև բերված աղյուսակում (2.13):


Աղյուսակ 2.13. Տարբեր մասնագիտություններ ունեցող հարցվածների բաշխումն ըստ արտերկրում փնտրվող աշխատանքի/մասնագիտության (% ամբողջի մեջ)

Մասնագիտություն/զբաղմունք	Ընդամենը հարցված	Արտերկրում փնտրող աշխատանքը			Այլ
		Ընդամենը	Նույնը կամ ցանկացած որից		
			նույնը	ցանկացած	
Ընդամենը հարցված	100.0	76.7	47.7	29.0	23.3
այդ թվում					
Պետական /զինվ. ղեկավարություն	100.0	25.0	-	25.0	75.0
Կոմերցիոն հատվածի ղեկավար	100.0	60.0	20.0	40.0	40.0
Ինժեներ/ տեխնիկ /մեխանիկ /բանվոր	100.0	84.8	54.5	30.3	12.2
Առևտուր/խանութայան	100.0	80.9	47.6	33.3	19.1
Կրթության ոլորտ	100.0	65.6	46.9	18.7	34.4
Առողջապահություն (բժիշկ, քույր կն)	100.0	95.6	73.9	21.7	4.4
Գյուղ /տնտ. ոլորտ	100.0	40.0	20.0	20.0	60.0
Տրանսպորտ	100.0	60.0	50.0	10.0	40.0
Սպասարկման ոլորտ	100.0	73.9	39.1	34.8	26.1
Խնամող, սոց. աշխ.	100.0	100.0	100.0	-	-
Տնային աշխատող	100.0	75.0	50.0	25.0	25.0
Արվեստի ոլորտ	100.0	54.6	36.4	18.2	45.4
Այլ	100.0	84.2	47.4	36.8	15.8
Չունի	100.0	53.8	-	53.8	46.2
Ուսանող	100.0	5.9	-	5.9	94.1

Արտագնա աշխատանքի համար նախընտրելի երկրները

Յուրաքանչյուր 6-րդ հարցված արտագնացության հարցում որևէ երկրի գերապատվություն չի տվել, հետևաբար կարելի է կարծել, որ համաձայն է աշխատել ամեն մի երկրում որտեղ բավարարվաստակ ապահովող աշխատանք կունենա (տես Գծապատկեր 2.8): Դրան հակառակ, Շիրակում և Սյունիքում հարցվածների համապատասխանաբար 64 և 77%-ը ունեն մեկ որոշակի երկրի նախընտրություն: Որպես այս կամ այն աստիճանի գերապատվելի, հարցման մասնակիցների կողմից մատնանշվել են 28 որոշակի երկրներ և «Եվրոպա» հավաքական հասկացությունը:

Գծապատկեր 2.8. Հարցվածների բաշխումն ըստ արտագնա աշխատանքների գերապատվելի երկիր ունենալ-չունենալու՝ մարզերով (% ամբողջի մեջ)



Առավել հաճախակի հիշատակված երկրների ցանկի (աղյուսակ 2.14) դիտարկումը հիմք է հանդիսանում արձանագրելու մի շարք անակնկալներ: Որպես դրանցից առավել անսպասելին, ամենայն հավանականությամբ, հարկ է գնահատել ՌԴ-ի ըստ առկա բոլոր աղբյուրների հայաստանյան աշխատանքային միգրանտների 80-90%-ի կենտրոնացման երկրի, ցածր ռեյտինգը. այն հիշատակակել են բոլոր ռեսպոնդենտների 4.3%-ը, իսկ որպես առաջին գերապատվություն՝ սոսկ 1.2%-ը: Երկրորդ՝ նվազ անսպասելի անակնկալը ԱՄՆ-ի ոչ բարձր ռեյտինգն է. այն առհասարակ հիշատակել են հարցվածների 5.3%-ը, իսկ որպես առաջին գերապատվություն՝ ընդամենը 0.8%-ը: Կարելի է ենթադրել, որ սա պայմանավորված է ոչ այնքան արտագնա աշխատանքների առումով երկրի ցածր գրավչությամբ, որքան այնտեղ հայտնվելու բարդությունների հստակ գիտակցմամբ: Ջարմանալի և, միաժամանակ, սակավ հասկանալի է կողմնորոշվածությունը դեպի Եգիպտոս, որը հիշատակել են բոլոր հարցվածների 5.3%-ը, իսկ որպես առաջին գերապատվություն՝ նույնիսկ 7.9%-ը: Անվերապահերեն անակնկալ է հանդիսանում նաև երկրների առաջատար եռյակը, թե՛ կազմի, և թե՛ նախընտրելիության աստիճանի անվիճելիության առումներով: Խորհելու տեղիք է տալիս, մասնավորապես, այն պերճախոս փաստը, որ Գերմանիան առաջին գերապատվություն է հանդիսանում ավելի քան յուրաքանչյուր երրորդ ռեսպոնդենտի համար:

Անփոփելիով նշենք, որ նախընտրելի երկրների հիշատակումների ընդհանուր թվում Եվրոմիության երկրների բաժինն անցնում է 81%-ից, իսկ առաջին գերապատվությունների թվում՝ այն հասնում է գրեթե 87%-ի:

Աղյուսակ 2.14. Աշխատանքային միգրացիայի համար գերապատվելի երկրների հիշատակումների հաճախությունը (% ամբողջի մեջ)

Երկրներ	Հիշատակումների ընդհանուր թիվը	այդ թվում՝ որպես.		
		1-ին գերապատվություն	2-րդ գերապատվություն	3-րդ գերապատվություն
Հիշատակումներ. բացարձակ թիվը	395*	252	92	51
%, այդ թվում	100.0	100.0	100.0	100.0
Գերմանիա	29.6	37.3	18.5	11.7
Չեխիա	17.2	26.2	2.2	-
Բելգիա	8.4	9.5	5.4	7.8
Եգիպտոս	5.3	7.9	-	2.0
ԱՄՆ	5.3	0.8	16.3	7.8
Ֆրանսիա	5.1	0.4	15.2	9.8
ՌԴ	4.3	1.2	6.5	15.7

Իտալիա	4.1	2.0	5.4	11.8
Իսպանիա	3.3	2.4	6.5	2.0
Եվրոպա	2.8	4.4	-	-
Հոլանդիա	2.5	0.4	8.7	2.0
Անգլիա	2.0	0.4	4.3	5.9
Լեհաստան	1.5	1.6	1.1	2.0
Հունաստան	1.3	0.4	2.2	3.9
Ավստրիա	1.0	1.2	-	2.0
Ավստրալիա	1.0	1.2	1.1	-
Այլ երկրներ (ընդամենը 13)	5.3	2.7	6.6	15.6

*Հարցվողները կարող էին նշել մեկից ավելի երկիր:

Հարցվածների պատասխաններից դատելով՝ տես աղյուսակ 2.15, երկրի նախընտրելիությունը կանխորոշող որևէ հստակ ընդգծված գործոն չկա. ընդհանուր առմամբ, այս կամ այն երկրի գրավչությունն առավելապես պայմանավորվել է օգնելու պատրաստ ընկերների առկայությամբ՝ յուրաքանչյուր 4-րդ պատասխանը, ինչպես նաև արտերկրում լավ ապրելակերպով՝ յուրաքանչյուր 5-րդ պատասխանը: Լավ ապրելակերպի ձգողականությունն առավել ցցուն է երևանցիների պատասխաններում, մինչդեռ տվյալ երկրի լեզվին տիրապետելու փաստարկը բերել են առավելապես Լոռիի ու Շիրակի ռեսպոնդենտները, որ հիմնականում կողմնորոշված են դեպի ՌԴ:


Աղյուսակ 2.15. Արտագնա աշխատանքների երկրների գերապատվությունների պատճառները

Մասնագիտություն/գբադքունքի խմբերը	Ընդամենը	այդ թվում ըստ մարզերի			
		Երևան	Լոռի	Շիրակ	Սյունիք
Հարցին պատասխանածների ընդհանուր թիվը	300	170	50	50	30
Պատասխանների տարբերակների հիշատակումներ. բացարձակ թիվը	492*	275	96	90	31
%, այդ թվում	100.0	100.0	100.0	100.0	100.0
Հայտարարություն է կարդացել	2.1	3.6	-	-	-
Այնտեղ ունի ընկերներ, որոնք կարող են օգնել իրեն	25.2	25.5	25.0	25.6	22.6
Նախկինում այնտեղ եղել է և ծանոթ է իրավիճակին	10.8	4.4	18.8	18.9	19.4
Տիրապետում է լեզվին	14.8	9.1	25.0	25.6	3.2
Այնտեղ արդեն ունի կապեր գործատուների հետ	1.6	2.9	-	-	-
Լսել է, որ այնտեղ հեշտ է աշխատանք գտնել	13.2	13.1	18.8	11.0	3.2
Ցանկանում է հեռանալ Հայաստանից	7.1	9.8	2.1	5.5	3.2
Արտերկրում առկա լավ ապրելակերպի պատճառով	19.9	26.2	7.3	6.7	41.9
Այլ	5.3	5.4	3.0	6.7	6.5

*Հարցվողները կարող էին նշել մեկից ավելի պատճառ:

Հետաքրքիր է այդ հարցում տեղեկատվա-գովազդային գործոնի աննշան դերակատարումը՝ «հայտարարություն է կարդացել» պատասխանը ինչպես է միայն Երևանում, այն էլ ընդամենը 11 անգամ կամ պատասխանների ընդամենը 2%-ի դեպքում: Սա միանշանակորեն խոսում է այն մասին, որ նույնիսկ մայրաքաղաքում խիստ ցածր է միգրացիոն տրամադրությունների ձևավորման հարցում հավաստի աղբյուրներից իրազեկման մակարդակը: Պատկերն ավելի մտահոգիչ է դառնում կարդացած հայտարարության աղբյուրը դիտարկելիս. թեև այդ մասին տվյալներն աղքատիկ ու սակավ գործնական հետաքրքրություն ներկայացնող են, այնուամենայնիվ Գծապատկեր 2.9-ից ակներև է, որ տեղեկատվության հիմնական աղբյուրը ֆորմալ ինստիտուտները չեն:

Գծապատկեր 2.9. Արտագնա աշխատանքների երկրների գերապատվության պատճառ հանդիսացած հայտարարության աղբյուրը (Երևան, % ամբողջի մեջ)




2.4. Աշխատանքային փորձ արտերկրում

Արտագնա աշխատանքային փորձի ընդհանուր ակնարկ

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ավելի քան յուրաքանչյուր 3-րդ հարցվածը նախընթաց 15 տարիների ընթացքում աշխատել կամ սովորել է արտերկրում, ընդ որում ցուցանիշի տվյալ մակարդակը կազմավորվել է երևանյան ռեսպոնդենտների մոտ միջինից կիսով չափ ցածր և Լոռիի ու Շիրակի՝ գրեթե կրկնակի բարձի ներառվածության համադրման արդյունքում (տես Գծապատկեր 2.10.):

Գծապատկեր 2.10. Հետազոտված համակցության բաշխումն ըստ վերջին 15 տարիներին արտերկրում աշխատած կամ սովորած լինելու հանգամանքի (% ամբողջի մեջ)



Հաջորդ աղյուսակի (2.16) տվյալները թույլ են տալիս *նախ և առաջ* արձանագրել, որ վերոնշյալ բոլոր ուղևորություններն էլ աշխատանքային են հանդիսացել: *Երկրորդ փաստը*, որի մասին վկայում են այդ տվյալները այն է, որ հարցվածների բացարձակ մեծամասնության արտագնա աշխատանքային փորձը թե՛ ընդհանուր առմամբ (73.6%), և թե՛ մարզային կտրվածքով, սահմանափակվում է միայն մեկ ուղևորությամբ: Վերջապես *երրորդ կարևոր փաստը*, որն հստակորեն դրսևորում են այդ տվյալները, դա արտագնա աշխատանքային հարուստ ավանդություններ ունեցող Շիրակի ու Լոռիի մարզերի հարցվածների թվում 2 և ավելի ուղևորություններ կատարածների անհամեմատ ավելի մեծ ներկայացվածությունն է՝ համապատասխանաբար մոտ 67 և 60 տոկոս:

Աղյուսակ 2.16. Վերջին 15 տարիներին արտերկրում աշխատած ռեսպոնդենտների բաշխումն ըստ աշխատանքային ուղևորությունների թվի (% ամբողջի մեջ)

	Ընդամենը	այդ թվում ըստ մարզերի			
		Երևան	Լոռի	Շիրակ	Սյունիք
Ընդամենը աշխատանքային ուղևորություններ կատարածներ. բացարձակ թվեր	106	30	32	33	11
%	100.0	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում ըստ ուղևորությունների թվի					
1	73.6	83.3	59.4	66.7	100.0
2	17.0	-	34.4	24.2	-
3	5.6	3.3	6.2	9.1	-
4	-	-	-	-	-
5	1.9	6.7	-	-	-
6	1.9	6.7	-	-	-

Արտագնա աշխատանքային փորձի աշխարհագրությունը

Առնվազն որպես ուշագրավ պետք է գնահատվեն նաև Աղյուսակ 2.17-ում բերված տվյալները, որոնցից ակնհայտ է հարցվածների աշխատանքային ուղևորությունների հիմնական նշանակետը. ՌԴ են ուղևորված եղել հարցվածների մոտ 75%-ը: Մնացած 19 երկրներին, որոնցում դիտարկվող ժամանակահատվածում աշխատել են հարցվածները, բաժին է ընկնում ուղևորությունների միայն քառորդ մասը, ընդ որում վեջիններիցս որևէ մեկին՝ այդ թվում նաև հարցվածների կողմից ընգծված կերպով նախապատվելի Գերմանիային, 5 ուղևորությունից, կամ դրանց ընդհանուր թվի մոտ 3%-ից, ավել բաժին չի ընկել: Սա հիմք է հանդիսանում *եզրակացնելու, որ հնարավոր նոր արտագնա աշխատանքային միգրանտների գերակշիռ մասը ևս, բախվելով նախընտրելի երկրներ մեկնելու անհաղթահարելի բարդություններին, եթե չիրաժարվի իր մտադրությունից, ապա ի վերջո նորից կբռնի գերապատվելիության ցածր մակարդակ ունեցող, սակայն մուտքի սահմանափակումներ գրեթե չունեցող ՌԴ ճանապարհը:*

Աղյուսակ 2.17. Վերջին 15 տարիներին հարցվածների արտագնա աշխատանքային ուղևորությունների բաշխումն ըստ երկրների (% ամբողջի մեջ)

Աշխատանքային ուղևորություններ	Ընդամենը	այդ թվում ըստ մարզերի			
		Երևան	Լոռի	Շիրակ	Սյունիք
Ընդամենը աշխատանքային ուղևորություններ. բացարձակ թվեր	154	50	47	46	11
%	100.0	100.0	100.0	100.0	100.0
որից					
ՌԴ	74.7	44.0	87.2	95.6	72.7
Գերմանիա	3.2	10.0	-	-	-
ԱՄՆ	3.2	10.0	-	-	-
Լեհաստան	2.0	4.0	-	-	9.1
Ուկրաինա	2.0	-	2.1	2.2	9.1
Շվեյցարիա	1.3	4.0	-	-	-
Բուլղարիա	1.3	2.0	2.1	-	-
Թուրքիա	1.3	-	4.3	-	-
Հունդիա	1.3	4.0	-	-	-
Հունաստան	1.3	-	2.1	2.2	-
Այլ երկրներ (ընդամենը 14)	8.4	22.0	2.1	-	9.1

Եթե չլիներ անբավարար ներկայացուցչականության արդեն հիշատակված խնդիրը, Աղյուսակ 2.18-ի տվյալները միանգամայն բավարար կլինեին արձանագրելու արտագնա աշխատանքային գործունեության ծավալների ընդլայնման միտվածությունը: Ձեռպահ մնալով նման եզրահանգումից, միաժամանակ հարկ ենք համարում ուշադրություն հրավիրել այն փաստին, որ հետազոտված համակցության ներկայացուցիչների արտագնա աշխատանքային ուղևորությունների 3/4-ը տեղի է ունեցել 2000-2006թթ., իսկ վերջիններիս գրեթե 57%-ը՝ վերջին 3 տարիների ընթացքում: Հավելենք, որ իրավիճակը որակապես նույնն է նաև առանձին մարզերի պարագայում:

Աղյուսակ 2.18. Վերջին 15 տարիներին իրականացված արտագնա աշխատանքային ուղևորությունների բաշխումն ըստ հարցվածների մեկնման տարիների (% ամբողջի մեջ)

	Ընդամենը	այդ թվում ըստ մարզերի
--	----------	-----------------------

		Երևան	Լոռի	Շիրակ	Սյունիք
Ընդամենը աշխատանքային ուղևորություններ. թիվը	154	50	47	46	11
%	100.0	100.0	100.0	100.0	100.0
որից՝ ըստ մեկնման տարեթվի					
1992	2.6	6.0	2.1	-	-
1993	1.9	2.0	4.3	-	-
1994	0.6	-	2.1	-	-
1995	3.9	4.0	4.3	4.3	-
1996	3.9	4.0	4.3	2.2	9.1
1997	3.3	4.0	-	2.2	18.2
1998	7.1	14.0	4.3	2.2	9.1
1999	3.3	6.0	-	4.3	-
2000	11.0	12.0	8.5	10.9	18.2
2001	6.5	6.0	6.4	8.7	-
2002	5.9	6.0	2.1	10.9	-
2003	8.5	4.0	8.5	10.9	18.2
2004	9.1	10.0	12.7	-	27.2
2005	12.3	10.0	17.0	13.0	-
2006	20.1	12.0	23.4	30.4	-

Աղյուսակ 2.19-ի տվյալները հիմք են հանդիսանում եզրակացնելու, որ ժամանակի ընթացքում հարցվածների աշխատանքային ուղևորությունների աշխարհագրության մեջ համակարգված բնույթ կրող փոփոխություններ չեն եղել: Մեկնումների հիմնական երկիրը եղել և շարունակում է հանդիսանալ ՌԴ-ն (որոշ տարիներին արձանագրված բացառություններն, ամենայն հավանականությամբ, պայմանավորված են համակցության փոքրաթվությամբ):

Աղյուսակ 2.19. Հարցվածների վերջին 15 տարիներն իրականացրած արտագնա աշխատանքային ուղևորությունների բաշխումն ըստ մեկնման տարիների և երկրների (% ամբողջի մեջ)


Մեկնելու տարեթիվը	Ընդամենը	Երկիր										
		ՌԴ	ՍՄՆ	Գերմանիա	Ուկրաինա	Լեհաստան	Շվեյցարիա	Բուլղարիա	Թուրքիա	Հունգարիա	Հունաստան	Այլ
Ընդամենը	100.0	74.7	3.2	3.2	2.0	2.0	1.3	1.3	1.3	1.3	1.3	8.4
1992	2.6	2.6	-	-	-	-	-	-	-	-	-	-
1993	1.9	0.6	-	-	0.6	-	-	-	-	-	0.6	-
1994	0.6	0.6	-	-	-	-	-	-	-	-	-	-
1995	3.9	3.9	-	-	-	-	-	-	-	-	-	-
1996	3.9	2.6	-	0.6	-	0.6	-	-	-	-	-	-
1997	3.3	2.6	-	-	-	-	-	-	-	-	-	0.6
1998	7.1	1.9	-	1.9	-	0.6	-	0.6	-	-	-	1.9
1999	3.3	2.6	-	-	-	-	-	0.6	-	-	-	-
2000	11.0	5.8	0.6	0.6	0.6	-	0.6	-	0.6	1.3	-	0.6
2001	6.5	5.8	0.6	-	-	-	-	-	-	-	-	-
2002	5.9	5.2	-	-	-	-	0.6	-	-	-	-	-
2003	8.5	7.1	-	-	-	-	-	-	0.6	-	-	0.6
2004	9.1	7.1	-	-	0.6	0.6	-	-	-	-	-	0.6
2005	12.3	8.4	1.9	-	-	-	-	-	-	-	0.6	1.3
2006	20.1	17.5	-	-	-	-	-	-	-	-	-	2.6

Արտագնա աշխատանքային փորձի տևողությունը

Վերջին 15 տարիների ընթացքում արտերկրում աշխատած ռեսպոնդենտների Հայաստանից բացակայության ընդհանուր տևողության բաշխումը ներկայացնող Գծապատկեր 2.11-ից ակներև է մի կողմից այն, որ բաշխման շարքերը բավական համամասնական են: Մյուս հետաքրքիր փաստն այն է, որ աշխատանքային ուղևորություններ կատարածների զգալի մասը (բոլորի՝ 38.4, Երևանում և Լոռիում՝ մոտ 44-ական, Շիրակում՝ 27.2 և Սյունիքում՝ 48.4 տոկոսը) վերջին 15 տարիներին երկրից

բացակայել է ընդհանուր առմամբ երկու և ավելի տարով:

Գծապատկեր 2.11. Վերջին 15 տարիներին արտերկրում աշխատած ռեսպոնդենտների բաշխումն ըստ ուղևորությունների գումարային տևողության (% ամբողջի մեջ)



Կայացած լուրաքանչյուր ուղևորության տևականության մասին բերված տվյալները հնարավորություն են տալիս դրանք տարակարգել նաև ըստ տիպերի: Աղյուսակ 2.20-ի տվյալները ցույց են տալիս, որ դրանց զգալի մասը տևել է մինչև մեկ տարի, և ամենայն հավանականությամբ, իրենից ներկայացնում է ավանդական՝ այսպես կոչված սեզոնային (գարուն-աշուն) աշխատանքային ուղևորություն: Սյուս կողմից, հավաստվում է նաև տևական՝ 2 և ավելի տարիներ ձգվող ուղևորությունների նշանակալիությունը: Ըստ որում, եթե Երևանցիների մոտ կայացած ուղևորությունների ընդհանուր թվի 40%-ը տևել են մինչև 3 ամիս, իսկ Լոռիում և Շիրակում գերակշռել են 6-12 ամիս տևած ուղևորությունները (բոլորի 36.3 և 54.3%-ը, համապատասխանաբար), ապա Սյունիքի ռեսպոնդենտների շրջանում ավելի տարածված (45.5%) են եղել 2 և ավելի տարիներ ձգվող և մշտական միգրացիայի ռիսկ պարունակող ուղևորությունները: Նման ուղևորություններից ինչ-ինչ մտայնություններով և հավանաբար ոչ փոքր վաստակով վերադարձած ռեսպոնդենտների միտվածությունը նոր աշխատանքային միգրացիայի, ամեն ինչից զատ, անուղղակիորեն վկայում է նաև, որ Հայաստանի սոցիալ-տնտեսական իրողությունները մնում են անբարենպաստ:

Աղյուսակ 2.20. Վերջին 15 տարիների ընթացքում ռեսպոնդենտների իրականացրած արտագնա աշխատանքային ուղևորությունների բաշխումն ըստ տևողության (%)

	Ընդամենը	այդ թվում՝ ըստ մարզերի			
		Երևան	Լոռի	Շիրակ	Սյունիք
Ընդամենը ուղևորություններ, որից՝	100.0	100.0	100.0	100.0	100.0
մինչև 3 ամիս	14.9	40.0	4.3	2.2	-
3-6 ամիս	13.7	14.0	17.0	8.7	18.2
6-12 ամիս	34.4	18.0	36.2	54.3	18.2
1-2 տարի	15.6	6.0	17.0	23.9	18.2
2-4 տարի	11.0	12.0	10.6	6.5	27.2
4 և ավելի տարի	10.4	10.0	14.9	4.4	18.2

Արտագնա աշխատանքային փորձի իրավական հիմքերը

Հետազոտության արդյունքներով պարզվել է կամ վերահաստատվել է այն փաստը, որ արտագնա աշխատանքային ուղևորությունների բացարձակ մեծամասնությունն իրականացվում

է առանց անհրաժեշտ իրավական նորմերի պահպանման: Առանց աշխատանքային պայմանագրի և/կամ գործնական հրավերի են իրականացվել արտագնա աշխատանքային ուղևորությունների 65 տոկոսը (Աղյուսակ 2.21): Ինչ վերաբերում է երևանաբնակների արտագնա աշխատանքային ուղևորությունների պայմանագրային ապահովվածության տրամագծորեն հակառակ իրողություններին, ապա դրանց հիմնավորված բացատրության համար տվյալ հետազոտության տվյալները, թերևս, անբավարար են: Միևնույն ժամանակ, կարելի է ենթադրել, որ մայրաքաղաքի բնակչությանն առավել հասանելի է տեղեկատվությունը, և իրագեկված լինելով նրանք կարողանում են համեմատաբար լավ իրացնել իրենց իրավունքները:

Աղյուսակ 2.21. Վերջին 15 տարիներին ռեսպոնդենտների արտագնա աշխատանքային ուղևորությունների բաշխումն ըստ աշխատանքային պայմանագրի և/կամ գործնական հրավերի առկայության (% ամբողջի մեջ)

	Ընդամենը	այդ թվում ըստ մարզերի			
		Երևան	Լոռի	Շիրակ	Սյունիք
Ընդամենը ուղևորություններ, որից .	100.0	100.0	100.0	100.0	100.0
Աշխատանքային պայմանագիր և /կամ գործնական հրավեր է եղել	29.2	64.0	12.8	8.7	27.3
Աշխատանքային պայմանագիր և /կամ գործնական հրավեր չի եղել	64.9	28.0	87.2	82.6	63.6
Չգիտեմ	5.9	8.0	-	8.7	9.1

3. Ամփոփում

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ընտրանքային համակցությունը կազմող տնային տնտեսությունների գրեթե 1/3-ում առկա են աշխատանքային միգրացիոն տրամադրություններ ունեցողներ:

Ընտրանքային համակցությունում ընդգրկված հնարավոր աշխատանքային միգրանտը ունի ունի հետևյալ *ժողովրդագրական բնութագրերը*. Ժաղկուն աշխատանքային տարիքում է՝ միջին հաշվով 37-38 տարեկան (ըստ տարածքների տատանումներն աննշան են, 36-40տ.), համարյա հավասար հավանականությամբ կին կամ տղամարդ է, ամուսնացած է, ունի 1.4 երեխա (Երևանում՝ 1.2, իսկ Շիրակում՝ 2)

Հետազոտված համակցությունում ընդգրկված հնարավոր աշխատանքային միգրանտների սոցիալական բնութագիրը հետևյալն է. նրանք բավականին կրթված են, հիմնականում ունեն «Ինժեներ/տեխնիկ/մեխանիկ/բանվորի» հավաքական մասնագիտությունը և 5-6 տարվա մասնագիտական աշխատանքի փորձ, քրոնիկ գործազուրկ է, անցումային տարիներին հատուկ մասնագիտական հմտություններ չի ձեռք բերել, օտար լեզուներից հիմնականում տիրապետում է ռուսերենին (մասամբ էլ՝ անգլերենին):

Հետազոտված համակցությունում ընդգրկված հնարավոր աշխատանքային միգրանտների միգրացիոն նախընտրությունները ներառում են հետևյալը. նրանք թեև նախընտրում են հավատարիմ մնալ իրենց ունեցած մասնագիտությանը, պատրաստ են նաև ցանկացած այլ աշխատանքի; իբրև միգրացիայի նշանակետ ունեն հիմնականում մեկ երկիր, և այն էլ՝ եվրոպական (նախընտրելի երկրների հիշատակումների ընդհանուր թվում Եվրոմիության երկրների բաժինն անցնում է 81%-ից, իսկ առաջին գերապատվությունների թվում նույնիսկ 87%-ից); նախապատվելի երկրի ընտրությունն իրականացնում են երկու գործոնի՝ ընկերների և բարեկացիկ կյանքի առկայության հաշվառումով; չունեն միգրացիոն կարգավորման մասին հավաստի տեղեկատվություն:

Հետազոտված համակցությունում ընդգրկված հնարավոր աշխատանքային միգրանտների միգրացիոն փորձը թեև բավական հարուստ և տևական է, էապես տարբերվում է նրանց նախասիրություններից:

Ամփոփելով վերոհիշյալը, կարելի է միանշանակորեն ասել, որ այսօրվա Հայաստանում խիստ կարևոր է միգրացիոն հոսքերի կառավարումը, մասնավորապես բնակչության իրազեկումը և տեղեկացված, սոցիալապես պաշտպանված աշխատանքային միգրացիայի կազմակերպման համար ինստիտուցիոնալ դաշտի զարգացումը: